ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2026/10Փ» ծածկագրով գնման ընթացակարգի* գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ **03.02.2026թ.**
Ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)	Նորիկ Մնոյան

Հանձնաժողովի անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Ռիմա Հարությունյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Հրանտ Մինասյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Աննա Ավագյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Էդգար Ֆրանգուլյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)	Լուսինե Աբովյան

«ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2026/10Փ » ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ:
2. «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2026/10Փ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխան կազմած լինելու մասին:
3. «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2026/10Փ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայություններ գնման գինը.

Չափաբաժինների		*Չափաբաժնի անվանումը*
համարները	*գնման գինը*	

* Սույն գնումն իրականացվում է համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15–րդ հոդվածի, 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա:

1	648 000	**S-8-55, /Մ-9 -Արավուս տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000 - կմ 2+000 և S-8-55-ից մինչև Արավուսի կենտրոն տանող 1,2 կմ երկարությամբ հատվածների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ**

2. «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2026/10Փ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխան կազմած լինելու մասին:

2.1 Էլեկտրոնային Armeps համակարգի միջոցով հայտերը բացվել են **2026 թվականի հունվարի 30-ին՝ ժամը 15:00-ին:**

2.2 Գնումների Armeps համակարգում հայտ են ներկայացրել **«Պրոմեթեյ» ՍՊ** և **«Արս-Անն» ՍՊ** ընկերությունները, սակայն «Պրոմեթեյ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած հայտի փաթեթը հնարավոր չէ բացել, իսկ «Արս-Անն» ՍՊ ընկերության կողմից համակարգում որևէ փաստաթուղթ չի կցվել:

3. «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2026/10Փ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

3.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) պահանջներով՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

3.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով՝ «Պրոմեթեյ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

3.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

3.4 Հաստատել Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Նորիկ Մնոյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Ռիմա Հարությունյան**	.....
	Հրանտ Մինասյան	.....
	Աննա Ավագյան	.....
	Էդգար Ֆրանգուլյան	.....
Քարտուղար՝	**Լուսինե Աբովյան**	.....